

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

«07» « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.

թիվ 484 հրամանով



« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՍԿՄՆԱԿ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

ՆԱԽԱԲԱՆ

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի դասախոսական կադրերի պահանջարկը համապատասխան որակավորում ունեցող երիտասարդ մասնագետներով համալրելու, ինչպես նաև նրանց մասնագիտական առաջընթացի ապահովման և զարգացման գործընթացը համարվում է քոլեջի ռազմավարական ուղղություններից մեկը:

Քոլեջի սկսնակ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականությունը քոլեջի անձնակազմի զարգացման երկարաժամկետ ռազմավարությունն է, որն ուղղված է բարձր որակավորում ունեցող անձնակազմի ձևավորմանը և զարգացմանը:

Նպատակը

Սկսնակ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության նպատակն է քոլեջում ունենալ դասախոսական կազմի մասնագիտական աճի անշեղ բարձրացում ու զարգացում:

Քաղաքականության իրականացման ընթացակարգերը՝

- Սկսնակ դասախոսների որակավորման բարձրացման համար հնարավորությունների ստեղծում,
- Սկսնակ դասախոսների արտադրողականության մակարդակի բարձրացում, մասնագիտական գործունեությունից բավարարվածության բարձրացում, մասնագիտական ոլորտում առաջխաղացման հարցերում քոլեջի ղեկավարության կողմից աջակցություն ստանալու հնարավորություն,
- Սկսնակ դասախոսների մասնագիտական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունների կատարելագործում և զարգացում՝ նրանց գործունեության արդյունավետության բարձրացման համար,
- Սկսնակ դասախոսների նկատմամբ խրախուսանքների կիրառում, որն իրականացվում է ներքին կանոնակարգով:

Հիմնական խնդիրները

- Սկսնակ դասախոսների մասնագիտական գործունեության զարգացումը,
- Սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման համակարգի ձևավորումը և ամրապնդումը, մասնագիտական առաջընթացի

ապահովման համակարգի կատարելագործումը՝ նոր մեխանիզմների մշակման միջոցով,

- Ժամանակակից ամբողջական մասնագիտական առաջընթացի ապահովման և աջակցման մեխանիզմների մշակումը:

Հիմնական սկզբունքները

- Սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի քաղաքականության իրականացման մեջ Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանումների և ղեկավար անձնակազմի ակտիվ համագործակցություն,
- Սկսնակ դասախոսների մասնագիտական աճի և աշխատանքի արդյունավետության բարձրացման աջակցության նպատակով փոխադարձ դասալսումների կազմակերպում, մրցակցային միջավայրի ստեղծում, արդյունքների և ձեռքբերումների օբյեկտիվ մեթոդների ստեղծում, արդյունքների և ձեռքբերումների օբյեկտիվ մեթոդների օգտագործում,
- Սկսնակ դասախոսների հետաքրքրությունների քննարկում՝ առաջընթացի ապահովման նպատակով,
- Հետադարձ կապի մեխանիզմների ակտիվ օգտագործում, հարցումների պարբերական անցկացում՝ աշխատակազմի բավարարվածության և սպասելիքների բացահայտման համար:

Նկարագրությունը

Սկսնակ դասախոսները, ինչպես նաև քոլեջի բոլոր աշխատողները իրավունք ունեն և պարտավոր են անընդհատ զարգացնել իրենց մասնագիտական ունակությունները, որոնք անհրաժեշտ են գիտակրթական գործունեության զարգացման և կատարելագործման համար:

Դրա համար քոլեջի ղեկավար կազմի կողմից պետք է կայացվեն որոշումներ և կազմակերպվեն միջոցառումներ (դասալսումների քննարկում)՝ կադրերի մասնագիտական առաջընթացի ապահովման հարցում աջակցություն տրամադրելու համար: Սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի վերաբերյալ քննարկումները պետք է իրականացնեն ուսումնական մասի ղեկավարը և առարկայական հանձնաժողովների նախագահները: Մասնագիտական առաջընթացը կարող է երաշխավորել այն սկսնակ դասախոսների շրջանում, որոնք նպատակ ունեն անընդհատ զարգացնել իրենց մասնագիտական կարողություններն ու հմտությունները, և ապահովում են գիտակրթական գործունեության առավել բարձր ցուցանիշներ:

Սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովումը ենթադրում է՝

- Առաջավոր փորձի, այդ թվում՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների տիրապետումը,
- Որակի ապահովման և կառավարման սկզբունքների տիրապետումն ու կիրառման ունակությունը,
- Լեզվական կարողությունների զարգացումը՝ գիտակրթական գործունեության զարգացման համար:
Քոլեջի կողմից ապահովվում են և խրախուսվում են սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման հետևյալ միջոցառումները՝
- Մասնակցություն պաշտոնական ուսումնական դասընթացներին և սեմինարներին,
- Ուսուցում աշխատանքային վայրում (ինքնուսուցում),
- Անձնակզմի մասնակցությունը սկսնակ դասախոսների մասնագիտական և ուսումնամեթոդական որակի ապահովմանը ուղղված գործընթացի օժանդակությունը,
- Սկսնակ դասախոսների մասնագիտական և ուսումնամեթոդական օժանդակության շարունակականություն և վերապատրաստումներ:

Իրավասությունները և պատասխանատվությունը

Սույն քաղաքականությունը իրականացնող մարմիններն են քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ուսումնական մասի ղեկավարը և առարկայական հանձնաժողովների նախագահները, ովքեր առնչություն ունեն սկսնակ դասախոսների առաջընթացի և զարգացման հարցերին:

Քաղաքականության իրականացում

Սկսնակ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը պետք է երաշխավորի կադրերի զարգացումը և գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացումը:

